ԴԻՐՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ ՍՊԱՌԱԶԻՆՎԱԾ



Վերջին հինգ տարիներին Ադրբեջանը 2-3 անգամ ավելի շատ սպառազինություն է ստացել, քան Հայաստանը, սեպտեմբերի 26-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Սակայն, նրա խոսքերով, մարտական գործողությունների ընթացքում Ադրբեջանը կորցրեց իր առավելությունը եւ ներկայումս երկու երկրների միջեւ առկա է սպառազինությունների մոտավոր հավասարակշռություն:

«Եթե Ադրբեջանին հաջողվեր պահպանել այդ առավելությունը, ապա նա անհապաղ կվերսկսեր պատերազմը»,- ասաց նա:

Հայաստանի նախագահը երկյուղ հայտնեց, որ եթե Հայաստանում հիմա քաղաքական պայքար ծավալվի Ռուսաստան-Բելառուս միությանը միանալու հարցի շուրջ, ապա դա կարող է դժվարացնել բարեկամության եւ համագործակցության մասին ռուս-հայկական նոր պայմանագրի վավերացումը:

Նա գոհունակություն հայտնեց ռուս-հայկական համագործակցության վիճակի առնչությամբ, հայտարարելով, մասնավորապես, որ «Հայռուսգազարդ» ռուս-հայկական ընկերության մասին համաձայնագիրը կիրականացվի՝ անկախ նրանից, թե Թուրքիան կհամաձայնի արդյոք ռուսական գազն ստանալ Հայաստանի տարածքով: Նա ավելացրեց, որ ռուսական մի ընկերության մասնակցությամբ սկսվում է «Նաիրիտ» քիմկոմբինատի «վերակենդանացումը»: